Հասցեատեր՝

«Շիրակ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ fcshirak58@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության
Կարգապահական և էթիկայի կոմիտեի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18.04.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	ԳԽ-018
Խախտում՝	1. «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Մորի Կոնեի (34202) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքը (Հավելված 1 Բ, 15-րդ կետ) 2. Դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտ իրեր նետելը (Հավելված 1 Ա, 22-րդ կետ) 3. Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում դաշտի տեր երկրպագուների կողմից հրավառ նյութեր կիրառելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ)
Առաջնություն՝	Հայաստանի գավաթի խաղարկություն
Խաղ՝	«Շիրակ» - «Ուրարտու», 09.04.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Մորի Կոնեին (34202) որակազրկել 3 (երեք) խաղով և տուգանել «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150,000 ՀՀ դրամի չափով։
   Որակազրկումը տարածվում է 2024 թվականի ապրիլի 9-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 21-րդ հոդվածի 3-րդ կետը՝ համակցել 2-րդ և 3-րդ կետերով նշված խախտումները և տուգանել «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: